

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

1 Մայիս Դրաունշվայլի մէջ ի ներկայութեան Գերմանիոյ հայոց առաջնորդ Գերշ. S. Գարեգին արքեպոս. Պերճնեանի և շրջանի հովի Սերովը: Վրդ. Խսախանեանի տեղի ունեցաւ Դրաունշվայլի Հայ Համայնքի անդամական ընդհանուր ժողովը: Ժողովի ընթացքին ընդունեցաւ Համայնքային նոր Վարչութիւն՝ բաղկացած 7 անդամներ: Յովիաննես Գալուսպեան, գործ. Գերգ Քալաթաշ, Անդրիս Արարտեան, Կարապետ Կեօքթաշ, Հրաչ Լազարեան, Վիքորիս Սիմոնեան, Յակոբ սրբ. Շահինեան:

7 Մայիս Շրութկարի Ս. Լեօնիարդ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յիշարակի Երեկոյ՝ Սուիրուած Հայերու և Ասորիներու ցեղասպանութեան: Երեկոն կազմակերպած էր Վիրթենպետրիկի Անդամական Եկեղեցին: Միջոցառման ներկայ էին՝ Անդամական Եկեղեցւոյ ներկայացուցիչ և քարուղար Ֆաթթէրը, ինչպէս նաև Կիւնպէն: Գերմանահայոց թեմնի ներկայ էին Հոգշ. Օշական վրդ. Կիւլկիւեան և Հոգշ. Արիստակէս արդ. Այվազեան, ինչպէս նաև Բարշ. Գոռ սրբ. Գետրովեան, և փսդույն հայ համայնքի վարչութեան անդամները:

Երեկոյեան Հոգեշնորի Հայր Սուրբերը կարարեցին հոգենանզսպեան արարողութիւն նահարակներու յիշարակին, ապս դասախոսութիւն կարդաց Պատրի-Վիրթէնմագերիկի Եկեղեցական համայնքի վարչութեան արքենապետ Բենիամին Վյնալը «Ճեղասպանութիւն ցեղասպանութենեն առաջ» թեմայով:

Միջոցառման վերջաւորութեան փեղի ունեցաւ խաղաղութեան համար աղօթք: Ասորի համայնքի օրիորդաց երգչախումբը իր մասնակցութիւնը բերա երգեցողութեան: Յիշարակի Երեկոն փակութեաւ հայերէն, ասորերէն և գերմաներէն լեզուներով օրինութեան աղօթքով:

Գերման-Անդամական Եկեղեցին Երկու տարին անգամ մը կը կազմակերպէ: «Kirchentag» կոչուող Եկեղեցական Համախմբում մը: 4-5 օրեր Երկարող այս համախմբումն, որ այս տարի փեղի ունեցաւ 25-29 Մայիս Համայնքի քաղաքին մէջ, իրենց մասնակցութիւնը կը բերեն հարիր հազարաոր անդամական քրիստոնեաներ: Տեղի կ'ունենան Եկեղեցական, կրօնական ու ասպուածաշնչական այլազան դասախոսութիւններ, քրիստոնեական երաժշգույթեան համերգներ: Գերմանիոյ զանազան քաղաքներու համայնքներ և քրիստոնեական կազմակերպութիւններ առիթ կունենան ներկայացնելու զիրենք և իրենց գործունեութիւնը: Դասախոսութիւններու կը հրավիրուին նաև քոյր Եկեղեցիներու ներկայացնիքներ Գերմանիայէն և արքասահմաններ: Գերմանիոյ մէջ գործող քոյր Եկեղեցիներուն եւս առիթ կը դրուի առանձին տաղաւարներու մէջ ներկայացնելու իրենց համայնքներն ու գործունեութիւնը: Եկեղեցական այս Համագումարին յանուն Առաջնորդարանի իր մասնակցութիւնը բերա Հոգշ. S. Սերովը: Վրդ. Խսախանեան:

Եկեղեցական համագումարի կազմակերպիչները յափուկ այս առիթի համար Հայաստանն հրաիրած էին նաև «Սաղմոս» իգական երգչախումբը, որը համագումարի շրջանակներու մէջ փայլուն կերպով ներկայացուց հայկական քրիստոնեական երաժշգույթիւնը:

«Սաղմոս» երգչախումբը, որ շորջ մեկ ամիս կը գտնուեր Գերմանիոյ մէջ, Առաջնորդարանի եւ լրեղական համայնքներու երակով եւ կազմակերպութեամբ համերգներ ունեցա Գերմանահայ փարբեր համայնքներու մէջ, ի մասնաւորի Պրեմըն, Պրաւոնշվայկ, Հալլե, Համարպիկ, Ֆուանքֆուրթ եւլն, իսկ Քելինի եւ Պելինի մէջ կափարեց Ս. Պափարազի Դպրաց բաժնի երգեցողութիւնը՝ սքանչելի եւ հոգեպարար պահեր պարզեւելով ներկաներուն:

21, 22 եւ 27 Մայիս Գերման-Աւելիարանական Եկեղեցւոյ Եկեղեցական Համախմբումին շրջանակներու մէջ, Հաննօվլեր քաղաքի երեք երգչախումբերուն միացումով կազմուած աւելի քան 100 հոգիանոց երկսեռ երգչախումբը փարբեր Եկեղեցիներու մէջ փրուած երեք համերգներով ներկայացուց երեական ծագում ունեցող գերմանացի նշանավոր երգահան Ալֆրեդ Շնիթրի «Համերգ երգչախումբի համար» սպեղծագործութիւնը, որ գրուած է Ս. Գրիգոր Նարեկացիի «Մարեան Ողբերգութեան» աղօթազրքի բառերուն հիման վրայ: Ցայսին երգահանը ծանօթանալով «Մարեան Ողբերգութեան» գործին ուսւերէն թարգմանութեան, մեծապէս փապակորուած եւ ներշնչուած է անկէ եւ անոր քանի մը զրոյիներու հիման վրայ մշակած է իր Վերոնշեալ սպեղծագործութիւնը: Երգչախումբը շորջ մեկ փարբայ փրնացան աշխարհանք եւ նախապարհասպութենէ եփք, կրցաւ բաւական յաջող կերպով ներկայացնել այս ոչ դիմին սպեղծագործութիւնը:

28 Մայիս թեմիս առաջնորդը՝ Գերշ. Տ. Գարեգին արքեպոս. Պերճեան, ներկայ գտնուեցաւ Գերմանահայոց Կեղրունական Խորհուրդի եւ Գերմանիոյ Հայ Բժիշկներու Միութեան փարեկան ճաշկերպյթին՝ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տիրան արք. Պետրոսեանի եւ Արք. Տ. Արմեն քինյ. Մելքոնեանի: Սոյն ճաշին ներկայ էին նաև Ռ Վերահակիչ Պալատի նախագահ պրին Ռուկանեան, ինչպէս նաև Գերմանիոյ պետական փարբեր մրցանակներու արժանացած չորս հայեր՝ փոքր. Միհրան Տապաղ, փրոփ. Կարօ Անդրանիկեան, փոքր. Ռաֆֆի Ալբերէնեան եւ պրին Գարեգին Գրիգորեան, որոնք յիշեալ կազմակերպութիւններու կողմէ պարուի արժանացան եւ ծանօթացուեցան հանրութեան:

Ճաշկերոյթի ընթացքին երաժշտական բաժինը սպանձնած էին՝ Պոնն քաղքի օվկրայէն Վարդենի Դալիթեան (երգչուի), Արմինէ Ղոկիոյեան (դաշնակահարուի) եւ Պելին քաղաքէն «Շանթ» երաժշտական խումբը:

29 Մայիս Հոգ. Օշական վրդ. Կիլվիլեան յանուն Առաջնորդարանի մասնակցեցաւ Պելինի Պուլկար-Ռուդափատան նոր Եկեղեցւոյ բացման եւ օծման համդիսութեան, ինչպէս նաև այս առթի պապրասպուած պաշտօնական ճաշկերոյթին: Հայր Սուրբը Պուլկար Միթրոփոլիթ Սիմէօնին, ինչպէս նաև այս առթիով յապուկ ժամանած Պուլկարիոյ նախագահ Փրկանօվին փոխանցեց առաջնորդ Սրբազնի բարեմաթթութիւններն ու շնորհաւրանքները: Մեծայարդ նախագահը փոխադարձաբար իր յարգալից վերաբերմունքն է արդահայրած Հայ Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Պուլկարիոյ հայոց թեմի վերաբերեալ՝ խնդրելով իր բարեմաթթանքները փոխանցել Նորին Սրբութիւն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Գերմանիոյ հայոց առաջնորդին: